ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1956 Общественные науки

Ս. Բաղդասարյան

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, այնուհետև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը ստեղծագործական ու գաղափարական վերակառուցման սկիզբ հանդիսացան անցյալի դեմոկրատական գրողների, այդ թվում Միքայել Մանվելյանի համար։

Մ. Մանվելյանը խորապես գիտակցեց մարդկության կյանքում առաջացած մեծ տեղաշարժերի իմաստը, ողջունեց այն և առանց տատանումների անցավ նոր կարգերի կողմը։

Սովետական կյանքի առաջին տարիներից նա դարձավ նոր, սոցիալիստական կուլտուրայի ակտիվ ու գիտակից կառուցողներից մեկը, աճեց որպես արվեստագետ ու գրող։

Մանվելյանի երկերում իրենց հետագա զարգացումը գտան նախասովետական շրջանի ստեղծագործական լավագույն գծերը, և հաղթահարվեցին պասսիվ հայեցողության, հոռետեսության երանգները։ Նրա երկերից անհետացան տխուր, միայնակ, կամազուրկ հերոսները, «ավելորդ մարդիկ», որոնք հեռանկարազուրկ լինելով կյանքում չէին գտնում իրենց տեղը։

Չնայած նրա այս շրջանի երկերը չեն գրված միատեսակ ուժով և միևնույն մակարդակը չունեն, սակայն հիմնականում գաղափարապես ավելի հստակ են և ունեն օպտիմիստական շունչ։ Ընդլայնվեց նաև գրողի ստեղծագործական թեմատիկան, նրա երկերում արտացոլվեց սոցիալիստական շինարարությունը, պատկերվեցին նոր մարդիկ, նոր կյանք կառուցողները, նրանց հոգեբանության վերակառուցումը, աշխատանքային էնտուզիազմը։

Անցյալ կյանքի թեմատիկան դեռևս զգալի տեղ բռնեց Մանվելյանի ստեղծագործության մեջ, սակայն այս անգամ արդեն նա անցյալը դիտում է սովետական գրողի աչքերով, ընդգծում հին կյանքի պատմական դատապարտվածությունը, պատկերում անցյալի մոհիկաններին՝ կապիտալիստական կարգերի վերջին մնացորդներին ու նրանց հակադրում սովետական մարդկանց։ Նա ձգտում է հաղթահարել անցյալի նատուրալիստական մաներաները, վեր բարձրանալ մանրուքներից, որոնել կյանքի տիպական ու բնորոշ երևույթները։

Եթե նախասովետական շրջանում Մ. Մանվելյանը հայտնի էր իբրև նովելիստ, ապա սովետական տարիներին նրա ստեղծագործությունը աճում է նաև ժանրային կողմով։ Զգացվում է գրողի էպիկական լայն կտավի գործեր (վեպ, վիպակ) ստեղծելու տենդենցը։ Նա դրում է նաև հրապարակախոսական ու մանկական երկեր, հուշեր, ակնարկներ, որոնք բոլորովին նոր երևույթ էին նրա ստեղծագործության մեջ։

* * *

Սովետական կյանքի առաջին տարիներին, ինչպես սովետահայ մյուս գրողները, Մ. Մանվելյանը նույնպես պատկերում է քաղաքացիական կռիվները Հայաստանում։ Այս թեմայով գրված նրա անդրանիկ երկերը՝ «Այրուլ հուշեր» և «Մղձավանջ» ակնարկները (1922), կրելով իմպրեսիոնիստական արվեստի կնիքը, գեղարվեստական իմաստով դեռևս թույլ են։

Առաջին ակնարկում հեղինակը ցնցող նկարագրություններ ունի 1918 թվականներին Բաքվում տեղի ունեցած արյունալի ջարդերի մասին, որոնք հրահրեցին ազգայնական պարտիաները. նա նշավակում է անգլիական իմպերիալիստներին, որոնք պատճառ դարձան խաղաղ բնակչության սոսկալի կոտորածների։ «Այո,— գրում է Մ. Մանվելյանը,— անգլիական զորքը բնակչությանը չի պաշտպանի թշնամու սրից ու կոտորածից, արդարացի էին բոլշևիկները, արդարացի էր Ստ. Շահումյանը»։

«Մղձավանջ»-ում պատկերված են հայ-ադրբեջանական ժողովուրդների ընդհարումների արյունոտ հետևանքները Հայաստանում։

Զգացվում է, որ հեղինակը փորձում է հաղթահարել հայեցողական ռեալիզմը, բարձրանալ առանձին փաստերի արձանագրումից, կատարել ընդհանրացումներ։

«Աչքերիս առջևից անցնում էին կոշմարային պատկերներ,— գրում է նա,— պատերազմի ստեղծած արհավիրքներն անվերջ շարքերով անցնում են՝ մահ, ավեր, հիվանդություն, սով... գիշատիչների կամքով ստեղծված այն դժոխքը, արյան ծովը, որի մեջ խեղդվում, արյունաքամ էր լինում աշխարհի ամբողջ աշխատավոր մարդկությունը»։ Մ. Մանվելյանի համար այժմ պարզ է, թե ովքեր են հրահրում պատերազմը, ում շահերի համար էր թափվում անմեղ մարդկանց ու ժողովուրդների արյունը։ Նա համակրանքով է խոսում ադրբեջանական ժողովրդի մասին, ադրբեջանցի ուսուցչի բերանով դատապարտում է հայ ազգայնականներին, ազգամիջյան կոտորածների կազմակերպողներին և առաջ քաշում ազգերի եղբայրացման հարցը։ «Մենք չհասկացանք,— ասում է ադրբեջանցի ուսուցիչը,— որ մեր թշնամին ընդհանուր է, և փոխանակ զենքը նրա կրծքին ուղղելու, իրար կոտորեցինք։ Բուրժուազիայի զազիր, կույր գործիքը դարձանք... զգույշ լինենք և էլ ծուղակը չընկնենք»։

1927 թ. Մ. Մանվելյանը հրատարակեց Բաքվի բանվորների կյանքից վերցված իր պատմվածքների ու նովելների ժողովածուն «Սև քաղաքը» խորագրով։ Այստեղ զետեղված գործերը հրատարակվել էին դեռևս նախասովետական շրջանում և հեղինակի կողմից ենթարկվել միայն ոճական բարեփոխումների։

Այդ պատմվածքների ճանաչողական նշանակությունը մեծ է։ Այդ մասին շատ դրական է արտահայտվել նախասովետական առաջավոր մամուլը։ «Մանվելյանը,— գրել է հայ ականավոր կոմունիստ և պետական գործիչ Ասքանազ Մռավյանը,— երիտասարդության հասակում ապրելով ու մտավորապես կազմակերպվելով բանվորական Բաքվում, ստացել է դրական ազդեցություններ նավթաշխարհի աշխատանքային հեղափոխական մթնոլորտից։ Նրա համայրելի գրական տաղանդը առատ նյութեր է ստացել նավթային բանվորների

90-ական տարիների դաժան կենցաղից և տվել մեր գրականության մեջ եզակի բանվորական պատմվածքներ»:

* * *

Սովետական շրջանում Մ. Մանվելյանը շարունակել է գրել նաև դրամատիկական գործեր, սակայն դրանք մեծ մասամբ կիսատ են մնացել։ Միակ ավարտված գործը «Գործադուլ» դրամատիկական էտյուդն է, որ լույս է տեսել 1927 թվականին։ «Գործադուլ»-ը նախահեղափոխական «Ուշ է» էտյուդի վերամշակված վարիանտն է։ Հաղափարական լուրջ տարբերություններ կան նրանց միջև։ Եթե «Ուշ է» էտյուդի հիմքում ընկած է հին կարգերի դեմ պայքարի անիմաստության գաղափարը, ապա՝ «Գործադուլ»-ը, հեղափոխական, օպտիմիստական երկ է և ունի սոցիալական որոշակի կոնֆլիկտ։

Էտյուդի հերոսները նախկին պասսիվ, սոսկ տառապող բանվորները չեն, այլ ակտիվ պայքարող հեղափոխականներներ (Սեղրակ, Սահակ և ուրիշները), որոնք գիտակցում են իրենց գործի արդարացիությունը, հավատում նրա հաղթանակին։

«Գործադուլ»-ի ֆինալը առանձնապես տպավորիչ է։ Բանվորները երդվում են իրենց սիրելի ընկերոջ՝ Սեղրակի մահվան առաջ, կռվել արյունարբու տերերի դեմ, լավ գիտակցելով, որ հեռու չէ այն օրը, երբ կբացվի մարդկության ոսկեշող այգը...

«Գործադուլ»-ը գեղարվեստական առումով, անշուշտ, ունի նաև թերություններ (օրինակ՝ հերոսների բնավորության, նրանց հոգեբանության դեռևս ոչ հստակ պատկերում, խոսակցական լեզվի ու ոճի թույլ անհատականացում և այլն), սակայն հիմնականում այն արժեքավոր է գրողի գաղափարական վերակառուցման, պրոլետարիատի աշխարհայացքի դիրքերին անցնելու իմաստով։

* * *

Սովետական շրջանի իր ստեղծագործությունների մեջ Մ. Մանվելյանը հաճախ է անդրադառնում հին աշխարհից մնացած թափթփուկների նկարագրությանը։ Մ. Մանվելյանը չի գնում այն գրողների ճանապարհով, որոնք անցյալի, «երեկվա մարդուն», քաղքենուն պատկերում են դրական գծերով (օրինակ՝ Զոշչենկոն ռուս գրականության մեջ)։ Նման գրողների գործերում մերկացման գիծը փոխարինվում էր դրվատանքով և, ինչպես Գորկին էր ասում՝ այդ գրողները զբաղվում էին անցյալի չնչին էակների, քաղքենիական կյանքի հերոսականացմամբ։

Աշնան ճանճեր է անվանում Մ. Մանվելյանը անցյալի մոհիկաններին, նոր կյանքից դուրս մղվող այդ մարդկանց։

«Մի գլխարկի պատմություն» (1929) երգիծական պատմվածքում Մ. Մանվելյանը քայլ առ քայլ մերկացնում է նեպմանական տարրերից մեկին՝ Ստեփան Խրիստաֆորովիչին և ցույց տալիս նրա բարոյական ոչնչությունը։

Հոգեբանական տեսակետից ճիշտ են ներկայացված հարուստ վաճառականի գոռոզությունը, սնապարծությունը, ցոփ կյանքը նախասովետական շրջանում, ապա՝ նրա վերաբերմունքը հեղափոխության ու Սովետական իշխանության հանդեպ։ Բնորոշ է, որ գաղանային ատելություն տածելով դեպի բոլշևիկները, վաճառականը սկզբում դեռ հույս ունի, որ Սովետական իշխանու-

թյունը երկար չի մնա։ Հաճախ նրա մտքերը դառնում են Եվրոպայի վրա, որտեղից սպասում է իր հույսերի իրականացումը, Դենիկինի ու Կոլչակի վրա, դաշնակ խմբապետների վրա։ «Նա խունանում էր, բայց չէր հուսահատվում»,— գրում է Մ. Մանվելյանը։

Այս պատմվածքներում իր ուշադրությունը բևեռելով անցյալի մոհիկանների վրա, Մ. Մանվելյանը դեռևս անհրաժեշտ տիպականացման չի ենթարկել նոր մարդկանց՝ կոմերիտական Վասիլին, Օսանին, Մարգարին և ուրիշների։ Պետք է նշել, որ նոր մարդկանց պատկերումը որպես երևույթ, դեռևս գեղարվեստական անհրաժեշտ կոնկրետություն չի ստացել նաև այդ շրջանի սովետահայ գրականության մի շարք այլ երկերում։

Այստեղ կարևոր է հեղինակի ձգտումը՝ տալ նոր մարդկանց կերպարներ, նրանց մեջ որոնել սովետական կյանքի իսկական տերերին։ Օսանի և Գուլամիրյանի կնոջ խոսակցությունը («Աշնան ճանճեր»), առաջինի համարձակ տոնը, վերջինի անզոր կատաղությունը, վերջապես տնային իրերը դուրս գցելու տեսարանում Վասիլի և Գուլամիրյանի ընդհարումը — այս բոլորը, իհարկե, մնում են հիշողության մեջ։

1929 թվականին «Նոր ուղի» ամսագրում սկսվեց տպագրվել Մ. Մանվելյանի «Եղսան մոքիր» վիպակը, որի առանցքն էր կազմում կրոնով թունավորված մարդկանց (Նուբար) հիասթափությունը կրոնից ու եկեղեցուց։ Այս հիմնական իդեան վիպակում լրացվում է ու ամբողջացվում մի կողմից կավատ Եղսանի գործողությունների և մյուս կողմից երկու որբերի՝ Գևոյի ու Շուշիկի պատմության նկարագրությամբ, որով վիպակի սյուժեն բարդանում է։

Նուբարը իր կյանքի դառն փորձով համոզվել է, որ կրոնը կեղծիք է։ Նրա հավատախախտությունը տեղի է ունեցել ռեալ հողի վրա և հեղինակի կողմից պատճառաբանված է։ Կրոնի հավատարիմ ստրուկից Նուբարը դառնում է նրա հակառակորդը։

Եղսանը մի իսկական ճիվաղ է։ Նա խորամանկորեն կարողանում է թաքցնել իր չարագործությունների հետքերը, վարժված է մեքենայությունների մեջ։ Որպես տիպ, Եղսանը, իհարկե, չափազանցված է։ Որոշ սիտուացիաներ հոգեբանորեն մինչև վերջ պատճառաբանված չեն։ Անհավատալի է, օրինակ, հեղինակի այն պնդումը, որ իբր թե հասարակաց տան աղջիկները դողում էին և սիրտ չէին անում բողոքել, այն էլ սովետական պայմաններում։ Վիպակը զերծ չի նաև նատուրալիստական նկարագրություններից, որոնք երբեմն տրվում են մերկապարանոց ու անսքող։

Բաղթական մի ընտանիքի պատմությամբ Մ. Մանվելյանը ցանկացել է ցույց տալ առաջին համաշխարհային պատերազմի ահավոր աղետները։ Ստեղծելով Շուշիկի և Գևորգի կերպարները, Մ. Մանվելյանը ցույց է տալիս նոր սերնդի բարձրացումը մեր իրականության մեջ։ Վերոհիշյալ տիպերը, իհարկե, սխեմատիկ են։ Անհամոզիչ է նաև վիպակի ֆինալը, հատկապես, այն, որ Գևորգը ճանաչում է իր կորած քրոջը և փրկում նրան Եղսանի ձեռքից։

Այսպիսով, սովետական նոր մարդկանց կերպարի ռեալիստական պատկերումը գրողի համար դեռևս ստեղծագործական լուրջ դժվարություն էր ներկայացնում։ Հետաքրքրական է, որ 1927 թ. լույս տեսած նրա երկու գործերը՝ «Գործադուլ»-ը և «Ժամանակակից մելոդրամ»-ը գաղափարական ու գեղարվեստական իմաստով տարբեր որակներ են ներկայացնում։ «Ժամանակակից մելոդրամ»-ը պատմվածքի հերոսուհի՝ գյուղական ուսուցչուհի Սաթո Հովակիմ-

յանին հեղինակը նպատակ ունի ներկայացնել որպես գյուղական էնտուզիաստ մտավորականի, նոր երիտասարդության ներկայացուցչի։ Սաթոն ավարտել է քաղաքի դպրոցը, դաստիարակվել կոմերիտմիության մեջ, օժտված է սովորելու և աշխատելու անհագ ձգտումով։ «Նա — ասում է հեղինակը,— առանց մի վայրկյան տատանվելու ընդունեց գյուղ գնալու առաջարկը», մտածելով որ «եթե բոլորն ուզենան քաղաքում մնալ, ապա ինչ կլինի գյուղը»։ «Նա անհատնելի եռանդ էր զգում գործելու, անվերջ աշխատելու, ամբողջապես նվիրվելու գյուղի զարթոնքին»։ Մյուս կողմից՝ այդ հերոսուհին ընթերցողին չի երևում իր հասարակական կամ մանկավարժական աշխատանքով ու գործունեությամբ և մնացել է միայնակ, ինքն իր մեջ ներքաշված, տառապող անձնավորություն, մեկը Մանվելյանի հին պերսոնաժներից։

Այստեղ չեն երևում գյուղական միջավայրի մարդիկ։ Հերոսուհու միակողմանի պատկերումը տարակուսելի է դարձնում նրա գործունեության վերաբերյալ հեղինակի այն պնդումը, որ իբր թե բռնաբարությունից, այնուհետև ապօրինի զավակին սպանելուց հետո Սաթո Հովակիմյանը իր մեջ ուժ է գտնում հաղթահարելու իր անձնական վիշտը և ինքնասպանության միտքը համարում հիմարություն։

* * *

30-ական թվականներին Մ. Մանվելյանը կանգնում է սոցիալիստական ռեալիզմի դիրքերի վրա, ձգտելով ավելի լայնորեն արտացոլել երկրի կյանքում տեղի ունեցող քաղաքական բարդ իրադարձությունները։

Պատասխանելով «Գրական դիրքերում»-ի անկետային (1930) և նույն թվականին արդեն մեր գրականության ռեալիստական պատկերման պահանջ դնելով, նա գրողի խնդիրն է համարում «տալ իր տեսածը և ապրածը», «ներդաշնակել միտքը և զգացումը»։ Նա գիտակցում է, որ գրականությունը կոչված է «դաստիարակելու, կրթելու մասսային»։ «Խուսափել գռեհկությունից և գռեհիկ նատուրալիզմից, գրվածքը հուզելով, վարակելով է, որ պետք է ազդեցություն թողնի»[1]։

«Չմոռանալ, որ ժողովուրդը ծարավ է գեղարվեստական խոսքի,— ասում է Մ. Մանվելյանը,— օր-օրի վրա աճում է գրականության պահանջը և խստապահանջ է դառնում ընթերցողը։ Կյանքը արագ-արագ է գնում։ Ետ չմնալ և գնալ կյանքի հետ... Խստապահանջ լինենք թե սեփական գործի և թե ընկերների նկատմամբ»[2]։

Իր հոդվածներում և ելույթներում Մ. Մանվելյանը սովետական գրողին խորհուրդ էր տալիս ամուր կապվել իրականության հետ, համընթաց գնալ կյանքին, պայքարել բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերելու համար, լինել հայրենիքի արժանի քաղաքացի, «անկեղծ ու անդավաճան կերպով ամուր կանգնել իր համոզմունքների վրա»։

Կոլտնտեսային շարժման տարիներին գրած «Միակ ուղիղ ճանապարհը», «Կոլտնտեսականների մոտ» ակնարկներում Մ. Մանվելյանը կոնկրետ փաստերի հիման վրա դրվատելով կոլտնտեսային կյանքի առավելությունները, ցույց է տալիս, որ այն գյուղացուն բերել է առատություն, ամրացրել է նրա տնտե-

---

[1] «Գրական դիրքերում», 1930, № 11—12։

[2] «Գրական թերթ», 1939, 31/XII.

սությունը, է՛լ ավելի սերտ է դարձրել տարբեր ազգությունների մարդկանց բարեկամությունը։

30-ական թվականներին Միքայել Մանվելյանը տպագրեց մի շարք գործեր՝ «Անապատը կծաղկի» (1933), «Պատկերներ ցարական բանակից» (1935), «Զարթոնք» (1939), «Մաբոն» (1936), «Ծեր գայլը» (1936), «Ալա Խոսրովը» (1936) և այլն։

«Անապատը կծաղկի» վեպում հեղինակը ընտրելով պատմահեղափոխական թեմա, պատկերել է մեր անցյալը, դարասկզբի սոցիալական շարժումների արձագանքները «Դ» գյուղում, կապիտալիզմի զարգացման հետևանքով քայքայվող գյուղացիության չարքաշ վիճակը։

Վեպում նկարագրվում են գյուղական ցեցերը՝ աղա Ոսկանը, Մակիչը, կուլակ Բարսեղը, տերտերը։ Նրանցից առավել հաջողված է աղա Ոսկանը — գյուղական կուլակի նոր տիպը, որը մի կողմից վաշխառու է, մի իսկական վամպիր, իսկ մյուս կողմից՝ գործարանատեր։ Նա տոկոսով դրամ տալով գյուղացիներին, ստիպում է նրանց զբաղվել շերամապահությամբ, էժան գներով վերցնում է հումքը, վերամշակում իր գործարանում։ Գյուղացիները նրա համար աշխատում են ոչ միայն հողի վրա, այլև նրա մետաքսագործարանում որպես բանվորներ։ Գյուղական վաշխառուի նման տիպ մինչև Մ. Մանվելյանը սովետահայ գրականության մեջ ոչ ոք չի ներկայացրել։

Վեպի առավելություններից մեկն էլ այն է, որ այստեղ ստեղծվել են դրական հերոսների (վարպետ Օհան, Նոյեմ, Մուրադ) մի քանի կերպարներ։ Գլխավոր հերոս վարպետ Օհանը գյուղացիության երազանքների մարմնավորողն է։ Վարպետ Օհանը միամտորեն կարծում է, որ անապատը ոռոգելու մասին իր երազանքները կարող էին իրականանալ բուրժուական կարգերի պայմաններում։ Դեպքերի զարգացման հետ աճում է նաև գլխավոր հերոսը, փոխվում են նրա հայացքները։ Հետագայում վարպետ Օհանը համոզվում է, որ իր երազանքները հին կարգերում երազանք էլ կմնային։

«Անապատը կծաղկի» վեպն ավարտվում է մեր կյանքի արևածագի պատկերով։ Իրականացել է գյուղացի Օհանի երազանքը, սովետական մարդկանց կամքով վերին գետը փոխել է իր դարավոր ընթացքը, անցել նորակառույց ջրանցքի միջով և ջրվեժ դարձած՝ թափվում է ամայի ու տոչոր անապատի վրա, նրան կյանք ու կենդանություն բերում, պտղատու այգիներով ծածկում ամրողջ հովիտը։

Սակայն Մ. Մանվելյանի այս վեպը ունի մի շարք թերություններ։ Ամենից առաջ գյուղում ծավալված քաղաքական դեպքերը հեղինակը չի դիտել Հայաստանի քաղաքացիական կռիվների լայն ֆոնի վրա։ Գեղարվեստական որոշակի, ռելյեֆ պատկերում չի ստացել գյուղի ռեոլյուցիոն խմբակի գործունեությունը։

Վեպում կան արհեստական շատ սիտուացիաներ, որոնք վնասում են երկի կոմպոզիցիային և ընդհանուր գեղարվեստական կողմին։ Ընթերցողն այն տպավորությունն է ստանում, որ հեղինակը երբեմն անբնական ճիգով փրկում է իր հերոսներին, երբ նրանք ընկած են վտանգի մեջ, առանց հիմնավորելու ու պատճառաբանելու այդ բոլորը։ Վեպի վերջում դաշնակների ձեռքը ընկած Մուրադը Կարմիր Բանակի կողմից անակնկալ կերպով ազատվում է այն պահին, երբ նրան դահիճները պատրաստվում էին կախաղան հանել։ Շատ թերու-

թյուններ կան վեպի լեզվի ու ոճի մեջ, կերպարների կառուցման, մարդկանց հոգեբանությունը պատկերելու գործում։

Այս կարգի թերությունները անշուշտ իջեցնում են Մ. Մանվելյանի «Անապատը կծաղկի» վեպի արժանիքները։

Միքայել Մանվելյանի այդ շրջանի ստեղծագործական հաջողության վկայությունն են հատկապես ցարական բանակի մասին դրած նրա սքանչելի պատմվածքները, որոնք հրատարակվել են առանձին գրքույկով 1935 թ. «Պատկերներ ցարական բանակից» խորագրով։ Այստեղ զետեղված են «Ֆելդֆեբել Խատիենկո», «Հարյուր ճիպոտ», «Խրտվիլակ», «Բեռնատար էշերի տրանսպորտը» պատմվածքները։ Հետագայում Մ. Մանվելյանը գրեց նաև «Մեր ֆելդֆեբելի հավերը» պատմվածքը։ Այս գործերը, բացառությամբ «Խրտվիլակ»-ի, հեղինակը գրել է սովետական տարիներին։ Դրանք մեծ մասամբ ցարական բանակի սարսափները ապրած հեղինակի տխուր հիշողություններն են։

Իր գրքույկում Մ. Մանվելյանը պատկերել է ցարական բանակի դաժան ռեժիմը, սպայության բարոյազրկությունը, քմահաճ ու դաժան վերաբերմունքը շարքային զինվորների նկատմամբ, վերջինների ողբերգական վիճակը, ծաղրի ու ծանակի ենթարկվելը բանակի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից։

«Կոպիտ, անկիրթ, ագահ, գծուծ»— ահա այն ածականները, որոնցով որակում է Մ. Մանվելյանը զինվորների ահ ու սարսափ հանդիսացող ֆելդֆեբելին։ Իրենից բարձր սպաների առջև «հլու հնազանդ, շողոքորթ» զինվորների նկատմամբ մի իսկական սատրապ — ահա թե ինչպիսին է ֆելդֆեբելը։ «Այդպիսիները,— գրում է Մ. Մանվելյանը,— հորն ու մորն էլ կծախեն։ Ցարական բանակում ամենից շատ դրանցից էին վախենում և ատում»։ Այդ սպայի մեջ մարդկային ոչինչ չկար, ամեն ինչ անասնական էր, նրա գերնպատակը ուտելդիրանալն էր։ Անասնական այդ բնազդները հեղինակը դիտել է նրբորեն ու դիպուկ։

Հեղինակը «Մեր ֆելդֆեբելի հավերը» պատմվածքում վշտով է պատմում շարքային զինվորի ողբերգության, նրա ստորացման ու նսեմացման մասին։ Նրա հերոսը՝ հրեա Մենդելսոնը ծաղր ու ծանակի է ենթարկվում, անվանվում կեղտոտ ջհուդ։ Զինվորի իրավունքների կոպիտ ոտնահարման, մարդու ոչնչացման ու դիմազրկման մի ահավոր փաստ է Մենդելսոնի տրագեդիան։ Ֆելդֆեբելի հրամանով նա կարգվում է «հավերի հրամանատար»։ «Ինթե մեկը կորել է, կաշիդ կքերթեմ, աչքերդ կհանեմ, իմացար»,— սպառնում է նա թշվառ զինվորին։ Այդ օրվանից «Մենդելսոնի քունը կտրվեց, ախորժակը փակվեց, դիշերը վեր էր կենում, գնում տեսնի հավանոցը հո մարդ չի մտել, երազում տեսնում էր, որ բոլոր հավերը սատկոտել են, սարսափած վեր էր թռչում տեղից»։

Երբ ֆելդֆեբելի սիրելի հավերից մեկը ընկնում է զուգարանի մեջ, ֆելդֆեբելը նախ՝ զինվորին ծեծում է դաժանորեն, ապա հրամայում է մտնել զուգարանի մեջ և դուրս բերել հավը։ Դա մարդկային արժանապատվության վայրագ ոտնահարումն էր։

Մ. Մանվելյանը պատկերում է ցարական բանակի այն զինվորներին, որոնք հիրավի սկսել են խորհել իրենց վիճակի մասին։ «Ֆելդֆեբել Խատիենկո» պատմվածքի հերոս Մարգարյանը մարդկային բարձր արժանապատվությամբ օժտված անձնավորություն է, որ այլևս չի կարողանում տանել բռնությունը և ձեռք է բարձրացնում իրեն անպատվողի վրա։ Այստեղ ռեալիստական

պատկերում է ատաղձ Մարգարյանի և Խաչիկիկոյի ընդհարումը։ Հոգեբանորեն պատճառաբանված են ընդհարման շարժառիթները և մյուս գինվորների արամադրությունները։

Պատմվածքի մեջ Մ. Մանվելյանը տիպականացրել է նաև հերոսի սեռը։ Խաչիկիկոյի լեզուն կոպիտ է, բիրտ, նա գործ է ածում ցինիկ բառեր և արտահայտություններ։ Գինվորների հայացքին նա ասում է. «Այդ կզկզանը պատրաստող մեքենային գինվոր դարձրեք»։ Սովորական խոսակցության մեջ նույնպես երևում է հրամայելու, սպառնալիքի տոնը, որը նպատակ ունի ընդգծել իր իշխանության ուժը և գիմացինի ստորությունը։

«Այդ ջհուդները և արմյաշկանները շոկոլադ են կրծում... Բոլ զզույշ լինեն, գերեզման կգշեմ, իրանց ձեռքով իրանց գերեզմանը փորել կտամ... Տուր նրանց հասկացրեք, որ ինձ հետ հանարը կարճ է տեսում, ասացեք, թե ով է ֆեյգֆերել Խաչիկիկոն... մարշ ձեր տեղերը...»։

Խաչիկիկոն արտաքուստ նույնպես հակակրանք է առաջացնում։ «Բարձրու կլոր, հիպնոզող աչքերով, կարճ խուզված ոգնու փշերի նման ճակատի կողմը ցցված... գեղագույն փշերի միջից երևում էր նրա զլխի վարդագույն մորթը»։ Իր պատմվածքը Մ. Մանվելյանը կառուցել է կոնտրաստի վրա, հին բանակին հակադրելով Սովետական բանակը։

Ցարական բանակին նվիրված շարքի վերջին «Բեռնակիր էշերի տրանսպորտը» պատմվածքում որոշակի կշռամրանք կա համաշխարհային պատերազմը սանձազերծողների նկատմամբ։ Հերոսները նզովում են աշխարհակործան պատերազմը, որը այնքան ավեռներ է բերում ժողովրդին։ Գեղջուհիներից մեկը ողբում է իր դառն վիճակը. որդիները սպրմաճակատումն են, ապրուստի միակ հույսը բեռնակիր էշն է, այն էլ վերցնում են բանակի համար։

Պատմվածքում ակնարկ կա այն մասին, թե ինչպես ցարական բանակը բարոյալքվել է, գինվորները խուսափում են կռվել թագավորի համար, փախչում են զորամասերից, իսկ ավելի ստոր գինվորները կաշառքով ազատվում էին գինվորական ծառայությունից։

Զգալի շափով օգտագործված է նաև հումորը, որն ավելի սուր է իմպերիալիստների նկատմամբ։

Այս պատմվածքներում գրողը չի մոռացել փառաբանել արձանագրողի գերումը։ Նրան հաջողվել է իրեն հայտնի բազմաթիվ փաստերից գտնել և տալ տամենատիպականն ու բնորոշը, գրանով իսկ հասնել գեղարվեստական ընդհանրացման։ Ցարական բանակին նվիրված պատմվածքները ունեն ճանաչողական լուրջ արժանիքներ։ Հայ գրականությունը անցյալում երբեք չի անդրադարձել ցարական բանակի պատկերմանը։ Մ. Մանվելյանի պատմվածքները իրենց սեպիտական որոշակի արժանիքներով գալիս են լրացնելու այդ բացը մեր գրականության մեջ։

* * *

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Մ. Մանվելյանի գյուղական («Մեր գյուղը», «Ագա Խոսրովը») պատմվածքները և «Զարթնք» վիպակը։ Գյուղական պատմվածքները իրենց թեմատիկայով, իհարկե, նորություն չեն։ Անցյալի մոհիկանների պատկերումով. հեղինակը հանդես եկավ նաև 20-ական թվականներին։ Նորը այժմ այն է, որ հեղինակը նրանց դիտել է

կոլտնտեսային շարժման վերելքի և գյուղում դասակարգային պայքարի սրման պայմաններում։ Փոխվել է նաև հեղինակի գեղարվեստական բացահայտման մեթոդը։ Սոցիալիստական ռեալիզմը նրան հնարավորություն է ավել ստեղծել դասակարգային թշնամու ավելի ռեալ կերպարներ։ Այդ պատմվածքները աչքի են ընկնում հակիրճությամբ, սեղմությամբ, մշակված լեզվով։ Գրողն այստեղ բնորել է շարադրանքի յուրատեսակ ոճ։ Բացասական հերոսների քամնելի ներքին բացահայտումում է այդ նույն հերոսների խոհերի, նրանց ինքնամերկացումների ճանապարհով։ «Մեր գայլը» պատմվածքի հենց սկզբում հեղինակը ոչ այնքան պատմում, որքան թարգմանում է Մղդսի Թեանի հրեշավոր հոգին, նրա ղեխում պտտվող մտքերը, որոնք ինչպես հեղինակն է ասում՝ «սև սարդի նման գալարվում էին գանգի մեջ»։

Մղդսի Թեանը սոցիալական հենարանից զրկված դասակարգային թշնամու իրական կերպարն է, որը գազանորեն սպանում է գյուղի չքավորներից մեկին՝ Վարոսին և ապա՝ նաև թյուրիմացաբար իր իսկ որդուն։ Իր պատմվածքում հեղինակը օգտագործել է ժողովրդական կենդանի լեզվի նրբերանգները, ոճերն ու դարձվածքները։ Պետքաժ, ինչպես միշտ, սեղմ է և ձուլված հիմնական սեքսային։

Դասակարգային թշնամու երգիծական պորտրեն է ստեղծել Մանվելյանը «Ակա Խոսրովը» պատմվածքում։ Բնորոշ է պատմվածքի սկզբում «Պառաված, ոսկորները դուրս ցցված գամբռ շան» սիմվոլիկ նկարագրությունը։ Այդ շանը մոտացության է տրված բոլորի կողմից, էլ չկան հավի, գոտան խորոված հյութեղ ոսկորներ։ — Ակա Խոսրովն էլ իր շան նման «խունացել ու բուրդը ավել էր»,— գրում է հեղինակը։ Հիրավի նրանց մեջ ընդհանուր շատ բան կա։ Ակա Խոսրովի հոգերանության համար շատ բնորոշ է նրա ներքին հրճվանքը հին մուրհակների թղթերը դիտելիս։ Գիշերները նստած իր փոքրիկ սենյակում, լամպի ագոտ լույսի տակ, հաշվիչը առաջին՝ նա հաշիվներ է անում և հրճվանքով տեսնում, որ «ելեն ժամանակը գա այդ մուրհակներից ստացված տոկոսները և մայր գումարը բավական են, որ նա մի քանի տարում նորից ապա Խոսրով դառնա»։ Նախկին այդ կուլակը առաջ եկեղեցի չէր գնում, իսկ տերտերներին համարում էր սև ագռավներ։ Այժմ նա ամուր կառչել է եկեղեցուն, իսկ տերտերը նրա մշտական ընկերն ու խորհրդակիցն է, նրա հետ մեկտեղ ձեր գայլը թույն է կուտակում հանրային կյանքի նկատմամբ, նա որոճում է գյուղին վնասելու իր ոճիրները, ապա՝ մոլի կատաղությամբ բռնված, այրում է հանրային բերքը։

Մ. Մանվելյանի այս պատմվածքը սեղմ է ու հակիրճ։ Չկան ավելորդ նկարագրություններ։ Խոսքը պատկերավոր է, դերծ պաճուճանքներից։

Պատմական բնդարձակ, մոտ 30 տարվա ժամանակամիջոց է ընդգրկում «Զարթոնք» վեպը։ Կինո ժապավենի նման գալիս և անցնում են հին կյանքի, առաջին համաշխարհային պատերազմի, քաղաքացիական կռիվների, գաղթականների տիրապետության, ապա սովետական կարգերի հաստատման, սովետական կյանքի առաջին տարիների դեպքերը։ Կոլտնտեսային շարժման նվիրված նկարագրություններով, որոնք ամենից հաջողվածն են, վեպն ավարտվում է։

Մարիամ Բաջու և նրա որդու՝ Պետիկի կյանքի նկարագրությամբ հեղինակը պատկերել է գյուղացիության վիճակը հին գյուղում։ Սակայն հեղինակը դրանով էլ սահմանափակվում է, ցույց չտալով գյուղացիության բոլորը,

նրա պայքարն ու դիմադրությունը սոցիալական անարդարության դեմ։ Այս իմաստով էլ «Անապատը կծաղկի» վեպը ավելի համոզիչ է, քան «Զարթոնքը»։

Վեպի առավելությունն այն է, որ այստեղ նկարագրվում է գյուղի դասակարգային պայքարը կոլտնտեսային շարժման օրերին։

Հեղինակին հաջողվել է ցույց տալ նաև սովետական գյուղի մի քանի նոր երևույթներ գյուղի կուլտուրական հեղաշրջումը, գյուղացիության հոգեբանության փոփոխությունները։ Վիպակի դրական հերոսները՝ Պետիկը, Ղասմը, Սարոն, Ջավիկը, Դաստագյուլը ամբողջովին նոր կյանքի արդյունք են։ Իրենց գործունեությամբ և հոգեբանությամբ այդ հերոսները ակտիվ գծերով են օժտված։

Ընթերցողի մեջ տպավորվում են Պետիկի ու Ղասմի սրտառուչ բարեկամությանը, ինչպես նաև նոր գյուղի կուլտուրական շինարարությանը նվիրված նկարագրությունները։ Սիրային ինտրիգան, որ լրիվ զարգացում չունի «Անապատը կծաղկի» վեպում, այստեղ տրվում է վիպակի սյուժետային հիմնական գծին զուգընթաց։ Դա Պետիկի ու Ջավիկի սիրո պատմությունն է, որը կառուցվում է նոր կյանքի ամուր հիմքի վրա։ Վիպակի հերոսուհի Դաստագյուլի կյանքի ուղին՝ դա խավարից դեպի լույսը, դեպի սովետական նոր կենցաղը ուղղված աղրբեջանցի կնոջ ուղին է։ Դաստագյուլը դեն է գցում չադրան, դառնում կոլտնտեսության ակտիվ աշխատողներից մեկը։ Վիպակի վերջում նա գնում է Մոսկվա՝ մասնակցելու առաջավոր կոլտնտեսականների համամիութենական խորհրդակցության։

«Զարթոնք» վիպակը նույնպես զերծ չէ թերություններից։ Շատ աղոտ են պատկերված գյուղական ակտիվի ներկայացուցիչները, այդ թվում գյուղբջիջի քարտուղարն ու գյուղսովետի նախագահը։ Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող տարիների դեպքերը հաղորդվում են կցկտուր և առանձին տպավորություն չեն թողնում։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Միքայել Մանվելյանը,— ինչպես սովետահայ բոլոր գրողները,— մասնակցեց թիկունքում կատարվող այն բոլոր ձեռնարկումներին, որոնք ուղղված էին թշնամու դեմ հաղթանակ տանելու նպատակին։

«Ամենքը, ով ինչով կարող է, պետք է ջանք չխնայի, որ որքան կարելի է, շուտ ջախջախվի այդ արյունարբու բորենու ոհիը»,— գրում է Մ. Մանվելյանը 1941 թ. հուլիսի 13-ին Մոսկվայում գտնվող իր աղջկանը։

1941—1944 թվականներին արտիստական իր լարված աշխատանքին զուգընթաց Մ. Մանվելյանը գրում է պատմվածքներ Հայրենական պատերազմի թեմայով, որոնք տպագրվում էին մամուլում, իսկ 1945 թ. Պետհրատը լույս ընծայեց նրա պատերազմական պատմվածքների գրքույկը։ Այդ պատմվածքներում նա պատմում է սովետական մարդկանց քաջությունն ու հերոսությունը թիկունքում («Պառավը», «Հարազատներ» և այլն) և ռազմաճակատում («Շատերից մեկը», «Կոլոտ Երջոն»)։

* * *

Լուրջ արժեք են ներկայացնում Միքայել Մանվելյանի մանկական ստեղծագործությունները։ Հատկանշական է, որ նա որպես մանկական գրող հանդես է գալիս միայն սովետական շրջանում և հատկապես 30-ական թվականներից։ Այդ իմաստով բացառություն են նախառևոլյուցիոն շրջանում նրա գրած

երկու պատմվածքները՝ «Երեք կոպեկ» և «Նոր տարվա նվերը» (անցյալում ունեցել է «Մանկական հիշողություններից» վերնագիրը)։

Մ. Մանվելյանը լավ ծանոթ էր մանուկների աշխարհին, կապված էր երեխաների հետ, սիրված նրանց կողմից։

Նա շատ մեծ նշանակություն է տալիս երեխաների կարծիքներին ու դիտողություններին։ Հաճախ նա իր ստեղծագործությունների ընթերցանությամբ հանդես էր գալիս երեխաների առաջ և ուշադիր լսում նրանց դիտողությունները։ Նա ուրախությամբ նշում էր, թե ինչպես մեր երեխաները ունեն մտավոր լայն զարգացում, ճաշակ, աշխատասիրություն, ընթերցանության մեծ սեր։ «Մեր փոքրիկ քննադատները» հոդվածում Մ. Մանվելյանը այն միտքն է հայտնում, որ ոչ միայն գրողը պետք է սովորեցնի մանուկներին, կրթի նրանց, նպաստի նոր մարդու, սովետական քաղաքացու աճմանը, այլև պետք է սովորի մեր զարգացած, հասունացած, խելոք և ընդունակ երեխաներից, մեր «փոքրիկ քննադատներից»։

Մ. Մանվելյանի մանկական ստեղծագործությունները աչքի են ընկնում իրենց մշակվածությամբ, պարզ ու անպաճույճ լեզվով. հեղինակը դրսևորում է պատմելու վարպետություն, շարժում երեխաների հետաքրքրությունը։

«Երեք կոպեկը» պատմվածքը մի էպիզոդ է աղքատ երաժիշտների կյանքից, պատկերում է քաղցից ու հիվանդությունից ուժասպառ երեխայի հոգեկան տառապանքները։ Պատմվածքի մեջ հանդես է գալիս տանջված սրտերի բողոքը կապիտալիստական քար աշխարհի դեմ, ուր, ինչպես ասում է ծեր երգիչը իր որդուն՝ «մարդ եթե մեռնի էլ, տիրություն անող չի լինի»։ «Նոր տարվա նվերը» պատմվածքը,— ինչպես «Մեր դիրեկտորի քրոջ տղան» հուշը — ինքնակենսագրական բնույթ ունի և պատմված է առաջին դեմքով։ Այստեղ հեղինակը ստեղծել է երկու հակադիր պատկեր. մի կողմում աղքատ ընտանիքն է, թաղված անծայր կարիքի մեջ, մյուս կողմում՝ հարուստ մի ընտանիք, որին անծանոթ է որևէ վիշտ կամ հոգս։ Մ. Մանվելյանը կարողացել է հարազատորեն ներկայացնել մանկան հոգեբանությունը, այն դարձնելով հուզիչ։ Ընթերցողը զգում է փոքրիկ տղայի սրտի զարկերը, երբ նա հույսերով համակ պատրաստվում է Նոր տարվա օրը գնալ հարուստ ազգականի մոտ նվեր ստանալու ակնկալությամբ, ապրում է մանկան հպարտ հոգու բոլոր մտատանջություններն ու նվաստացումները, զայրանում, երբ հարուստ ազգականը նրա ձեռքի մեջ է դնում հինգ կոպեկ, ու նրա հետ մեկտեղ թախծում այն աշխարհի մասին, ուր այդպես տմարդի ու դաժան են վերաբերվում մարդու նկատմամբ։

Ուշագրավ է Մ. Մանվելյանի «Խուժաններ» պատմվածաշարքը, որը պատկերում է անապատան երեխաների կյանքը։ Մ. Մանվելյանի նկարագրած խուժանները՝ դրանք առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակ մաուզերիստների զոհերի երեխաներն են, որոնք որբանալով ընկել են վատ միջավայրի մեջ։ Բնորոշ է այն փաստը, որ խուժան երեխաները (Համո, Գալո, Վաշագան, Սեթո) փախչում են ամերիկյան որբանոցներից և երազում ազատ կյանքի մասին, այնտեղ «Ուր չկան ամերիկյան որբանոցների ծեծն ու կոպտությունները, չկա երկաթյա ցանկապատը, ոչ էլ հրացանով պահակ»։

Մ. Մանվելյանը սրտի ցավով է նկարագրում այդ փոքրիկ մանուկների բարոյական անկումը։ Առանց հուզվելու չի կարելի կարդալ «Խուժանը» պատմվածքը, ուր նկարագրված են փոքրիկ Համոյի և Գալոյի ապրումները։ Հեղինակը ցավակցելով նրանց, սակայն, վատատես չէ այդ «փչացած» տղաների դաս-

տիարակության նկատմամբ։ Ընդհակառակը, իր պատմվածքներում նա ցույց է տալիս նոր կյանքի դաստիարակչական նշանակությունը։ Սովետական մարդիկ հանում են այդ որբերին հին աշխարհի կեղտից և դնում նոր կյանքի լայն ճանապարհի վրա։ Պատմվածքի վերջում («Դեպի ապաստարան») այդ երեխաները ուղարկվում են մանկատուն, ուր նրանց սպասվում էր սովետական մարդկանց ջերմ հոգատարությունը։ Ո՛չ միայն սովետական կյանքի առաջին տարիներին, այլև հետագայում ևս մեր երեխաների դաստիարակության հարցը շարունակ զբաղեցրել է Մ. Մանվելյանին։ Որպես ազնիվ քաղաքացի և հայրենասեր, նա ձգտում էր, որպեսզի լավ կրթվի ու դաստիարակվի մեր մատաղ սերունդը, չկրի մենհարազատ միջավայրի ազդեցությունը։

Մ. Մանվելյանի մանկական ստեղծագործությունների մեջ մեծ տեղ են բռնում կենդանիները։

Գրողը կենդանիների աշխարհը ներկայացնում է առանձին ջերմությամբ, բարձրացնում կենդանիների խնամքի ու պաշտպանության հարցը։

Հաճախ նկարագրելով կենդանիներին, հեղինակը դուրս է՝ գալիս տվյալ թեմայի շրջանակներից և ընդհանրացումներ կատարում։ Օրինակ, «Մի մուկիկի պատմություն» փոքրիկ պատմվածքում նա նկարագրում է աշխատասեր մեղուներին, որոնք պատժում են իրենց վաստակը գողացող մկանը։ Այստեղ մուկը թշնամու սիմվոլն է։

«Մեզ հարկավոր է նաև ուրախ, զվարճալի գիրք, որը երեխայի մեջ զարգացնում է հումորի զգացումը»[1],— ասել է Մ. Գորկին։ Մ. Մանվելյանի մի քանի մանկական պատմվածքներում առկա է նաև այդ ուրախ հումորը [«Պողոս քեռու կատուն», «Լուսիկի շնիկը», «Մկան տոշը», «Տոկիոյից Կիոտո», և այլ մանկական գործեր]։

* * *

Մ. Մանվելյանը ունի նաև ճամբորդական տպավորություններ և հուշեր։ Դեռևս 1914 թ. նա գրել է «Մի գիշեր Ղալաթիայում» ճամբորդական ակնարկը, տպագրված «Մշակ» թերթի նույն տարվա № 18 և 19-ում, ուր պատմում է իր տպավորությունները Պոլսի Ղալաթիա թաղամասից, մերկացնում հասարակության բարքերի այլասերումը, ցույց տալիս իր հակակրանքը բուրժուական հասարակարգի նկատմամբ։

1950 թ. Հայպետհրատը լույս է ընծայել Մ. Մանվելյանի հետմահու, «Թերթիկներ իմ կյանքից» հուշերի գիրքը։

Հիրավի, «Թերթիկներ իմ կյանքից» գիրքը գրված է ազնիվ ու անկեղծ մարդու գրչով։

Հուշերը սկսվում են հեղինակի նախնիների հետ կապված իրադարձությունների նկարագրությամբ։ Այստեղ ընթերցողը ծանոթանում է Մ. Մանվելյանի հայրենի գյուղի՝ Ագուլիսի հետ, իմանում նրա մանկության, պատանեկության ու երիտասարդական տարիների կարևորագույն դեպքերի մասին։

Չխախտելով ժամանակագրական կարգը, Մ. Մանվելյանը հիշում է բազմաթիվ անցքեր ու գործողություններ, որոնք կապված են եղել իր գրական ու թատերական գործունեության հետ։ Առանձնապես հետաքրքրական են նրա հիշողությունները Անդրկովկասի զանազան վայրերում (Էջմիածին, Շուշի, Բաքու, Թիֆլիս և այլն) ապրած ու աշխատած տարիների, գրական ու թատերական

[1] Ա. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, էջ 113։

գործիչների հետ ունեցած ծանոթության ու մտերմության մասին։ Շատ արժեքավոր տեղեկություններ են տրվում հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներ Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Կոմիտասի, Կարամուրզայի, Սիրանուշի, Հ. Աբելյանի, Գ. Պետրոսյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Արմենյանի, Վահր. Փափազյանի և ուրիշների մասին, վեր են հանվում նրանց կյանքի, աշխատանքի, բնավորության շատ կարևոր կողմեր։

«Թերթիկներ իմ կյանքից» գրքի յուրաքանչյուր էջից զգացվում է հեղինակի խոր ատելությունը դեպի հին կապիտալիստական աշխարհը, ուր արվեստագետն ու գրողը ենթարկված էին ստորացման, նյութական զրկանքների, բախտի կույր քմահաճույքի...

Ճանաչողական արժեք են ներկայացնում հայ թատրոնին նվիրված հիշողությունները։ Հին թատրոնը մասնատված, առանձին խմբերի թատրոն էր, որը չուներ ո՛չ կայուն դերասանական կազմ, ո՛չ ռեպերտուար և ո՛չ էլ ռեժիսյուրա։ Սակայն հին թատրոնը, այնուամենայնիվ, պահպանում էր իր գոյությունը հայ բեմի ականավոր գործիչների համառ աշխատանքի, ամեն տեսակի խոչընդոտների հաղթահարման գնով։ Ռուսական առաջավոր արվեստը նրանց ուղեցույց ասող էր ռեալիզմի տրադիցիաները թատրոնում արմատավորելու գործում։ Ինչպես հայ առաջավոր մտավորականները, այնպես էլ Մ. Մանվելյանը շարունակ բարձր է գնահատել ռուս առաջավոր կուլտուրան։ Իր հուշերում նա խոսում է այն ուժեղ ու անմոռանալի տպավորությունների մասին, որ ստացել է ռուսական թատրոնից և ռուս բեմի վարպետներ Ստանիսլավսկուց, Մոսկվինից և Կաչալովից։

Մ. Մանվելյանի հուշերը կիսատ են մնացել հեղինակի մահվան պատճառով։ Սակայն այն, ինչ հեղինակը հասցրել է գրի առնել, լուրջ արժեք են ներկայացնում մեր գրականության ու թատրոնի համար։

* * *

Միքայել Մանվելյանը թողել է մի շարք ձեռագրեր ու անավարտ գործեր։ Ինչպես հայտնի է, նա հղացել էր գրել «Գալենց տունը» վեպը։ Հեղինակի արխիվում պահպանված են վեպի մի քանի ձեռագրերը, իսկ վեպի նախերգանքը տպված է «Գրական թերթ»-ի 1940 թ. հունիսի 10-ի համարում։ Իր վեպի մեջ Մ. Մանվելյանը ցանկացել է պատկերել հայ ընտանիքներից մեկի՝ Գալենց տան պատմությունը սկսած 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը։ Մյուս անավարտ վեպը կոչվում է «Երևան», որից մի քանի գլուխ տպագրված է «Սովետական գրականություն» ամսագրում (1938—1940 թթ. համարները)։ «Երևան» վեպը սկսվում է անցյալ դարի 90-ական թվականներից։ Այնտեղ պատմական ֆոնի վրա գծագրվում են հին Երևանի անհրապույր պատկերները, հանդես են գալիս հասարակական տարբեր շերտերի ներկայացուցիչներ առևտրականներ, արհեստավորներ, մտավորականներ։ Ըստ երևույթին, հեղինակը ցանկացել է վեպի առանցքը դարձնել հարուստ վաճառական Թավրիզյանին, սակայն հրատարակված գլուխներում ավելի մեծ տեղ է տրված աղքատ դերձակ Մինասի ընտանիքի նկարագրությանը։

Մ. Մանվելյանի ձեռագրերից ուշադրության արժանի է նաև «Հանգցրեք ջահերը» վերնագրով հեքիաթը երկու վարիանտով։ Առաջին վարիանտն ունի «Կղզիների արքայադուստր» վերնագիրը։ «Այս հեքիաթը,— գրում է հեղինակը,— ապրել է հարյուրավոր տարիներ մեզնից առաջ,— այդ կղզիները վաղուց

է, որ այլևս չկան։ Այն օրը, որ արքայադուստրը հանեց իր աչքերը, և աքսորից վերադարձած Էլլո բանաստեղծի ձեռքը բռնած հեռացավ հոր ապարանքից, ծովի խորքից ալիքները... բարձրացան և ծածկեցին կղզիները»։

Հեքիաթի մեջ հեղինակը փորձել է գծել ժողովրդի ազատության համար պայքարող հերոսների՝ արքայադուստր Զիզիկարային և բանաստեղծ Էլլոյին։ Ուժեղ կամքով է օժտված արքայադուստր Զիզիկարան, որը տանել չի կարողանում բռնավորին, չի կատարում դաժան հոր, կղզու Նիաթ թագավորի կամքը՝ ամուսնանալ հարևան թագավորի որդու հետ, այլ հանելով իր աչքերը, որպես բողոքի արտահայտություն, հեռանում է պալատից։ Զիզիկարայի սիրած տղան՝ բանաստեղծ Էլլոն իր քաջ ընկերների հետ հերոսաբար մարտնչում է թագավորի դեմ՝ հանուն ազատության։ Էլլոն իր խմբով հարձակվում է թագավորի ղինանոցի վրա. «Պայթեց փոթորիկը»,— գրում է հեղինակը ժողովրդական ապստամբության մասին։ Այստեղ էլ ձեռագիրը ընդհատվում է։ Զրույցի մյուս վարիանտը, որ արձակ պոեմ է և ունի «Վառեցեք ջահերը» վերնագիրը, որոշ վերամշակմամբ տպագրվել է «Գրական թերթում» (տե՛ս 1939 թ. 20/12)։ Վերնագրի մեջ հեղինակը ընդգծել է իր զրույցի օպտիմիստական բնույթը։ «Հանգցրեք ջահերը» — այսպես է դաժան արքայի մահասարսուռ հրամանը, որը արձագանքի պես տարածվում է քաղաքի վրա։ Բարձր աշտարակի վրայից հնչում է նաև մի ուրիշ մահագավ ձայն՝ այդ հսկայական զանգի ձայնն է, որը ստրկական աշխատանքի է կանչում մարդկանց դաժան արքայի ստրուկներին։ Ծերունի զանգահար Գուսրապը 30 տարի է, ինչ լարելով «մկանների ամբողջ ուժը, շարժում է հսկա լեզվակը, և հարվածում զանգի կողերիս, մոնչում, ոռնում է կամարների տակ... հարվածից տնքում է ցավագին ու տխուր։ «30 տարի զանգահար է նա, բայց էլ չի լսում իր զանգի ձայնը» բոթաբեր սև ագռավի պես կռկռում է քաղաքի գլխին, աշտարակի բարձր կամարների տակ...»։ Եվ ծերունին, որ տառապած մարդկության սիմվոլն է, երազում է ցավատանջ, այն օրերի մասին, երբ աշտարակի բարձունքից կհնչի «Վառեցեք ջահերը» մարտական կոչը։ Նրա աղջիկը՝ Զիզիկարան (այս վարիանտում Զիզիկարան զանգահարի աղջիկն է.) հուսադրելով հորը ասում է. «Հավատա հայրիկ, չարն անվերջ չի թագավորի, կգա և նրա վախճանը»։ Եվ ծերունին հավատում է իր աղջկան։ Նա ապաստան է տալիս բանտից փախած Էլլո բանաստեղծին, որին սիրահարվում է Զիզիկարան։ Ամբողջ պոեմը հնչում է որպես ազատության հիմն։

* * *

Սովետական տարիներին Մ. Մանվելյանի գրած գեղարվեստական երկերը, թեպետ և քիչ ուսումնասիրված, մեր սովետական գրականության ուշագրավ եռույթներն են։

Դրանց մեջ արտացոլվել է մեր կյանքը, իրականությունը, որն այնպես սիրում էր հայրենասեր գրողը։ Դրանք դրվատում են սովետական մարդկանց գործերն ու հերոսությունները, և երբ գրողը երբեմն վերհիշում է անցյալի տխուր պահերը, պատկերում հին ու անցած օրերը, ապա միայն նրա համար, որ ընդգծի մեր նոր կյանքի թովչանքը, ժողովրդի անափ երջանկությունը սովետական իրականության մեջ։